ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 դեկտեմբերի 2013 թվականի N 641-Ա

ք. Հրազդան

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասի, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետի, հիմք ընդունելով Սոլակ համայնքի բնակիչ Է.Ասատրյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով Էմմա Ասատրյանին հատկացնել 20 000 (քսան հազար) ՀՀ դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ հինգ աշխատանքային օրյա ժամկետում ապահովել գումարի վճարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

Հավելված

ՀՀ Կոտայքի մարզպետի

դեկտեբերի 23 -ի **N** -641- Ա որոշման

Դրամական օգնություն ստացողների ցուցակ

Հ/Հ	Անուն Ազգանուն	Բնակավայր	Գումարը	Ծանոթություն
1	Էմմա Ասատրյան	Սոլակ համայնք	20 000	